ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԲԱՍԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1-Ն

18 հունվարի 2016 թվական **գյուղ Բասեն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՍԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14 -Ի ԹԻՎ 23-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 63-րդ հոդվածի, <<Իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

Համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բասեն համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բասեն համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 23-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1. Համայնքի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ՝ «0» թիվը փոխարինել «597.4 հազար դրամ» թվով, այդ թվում վարչական մասի «0» թիվը փոխարինել «459.1 հազար դրամ» թվով, ֆոնդային մասի «0 դրամ» թիվը փոխարինել «138.3 հազար դրամ» թվով:
2. Համայնքի բյուջեյի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդի գումարն ուղղվում է նախորդ եզրափակված բյուջետային տարում բյուջեյի վարչական մասից ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա պարտավորությունների կատարմանը՝ 85.9 հազար դրամ:
3. Համայնքի բյուջեյի ֆոնդային մաս «0» թիվը փոխարինել «511.5 հազար դրամ» թվով:
4. Եկամտային մասի <<Ընդամենը եկամուտներ>> տողի <<38177.7 հազար դրամ>> թիվը փոխարինել <<38803.0 հազար դրամ>> թվով, այդ թվում՝

1) <<Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար>> տողի <<4449.5 հազար դրամ>> թիվը փոխարինել <<4479.4 հազար դրամ>> թվով,

2) <<Գույքահարկ փոխադրամիջոցների համար>> տողի <<4002.0 հազար դրամ>> թիվը փոխարինել <<3996.4 հազար դրամ>> թվով,

3) <<Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ>> տողի <<1292,3 հազար դրամ>> թիվը փոխարինել <<1893.3 հազար դրամ>> թվով:

5. Ծախսային մասի <<Ընդամենը ծախսեր>> տողի <<38177.7 հազար դրամ>> թիվը փոխարինել <<39400.4 հազար դրամ >> թվով, այդ թվում

1) վարչական մասի <<38177.7 հազար դրամ>> թիվը փոխարինել <<38888.9 հազար դրամ>> թվով, ֆոնդային մասի <<0 դրամ>> թիվը փոխարինել <<511.5 հազար դրամ>> թվով,

2) Բաժին 06, խումբ 4, դաս 1 <<Փողոցների լուսավորում>> ծրագրի <<600.0 հազար դրամ>> թիվը փոխարինել <<1197.4 հազար դրամ>> թվով, այդ թվում ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝

3)<<Էներգետիկ ծառայություններ>> 4212 հոդվածի <<300.0 հազար դրամ>> թիվը փոխարինել <<385.9 հազար դրամ>> թվով,

4) <<Շենքերի և շինությունների>> 5113 հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<511.5 հազար դրամ>> թվով,

5) Բաժին 10, խումբ 4, դաս 1 <<Ընտանիքի անդամներ և զավակներ>> ծրագրի <<50.0 հազար դրամ>> թիվը փոխարինել <<200.0 հազար դրամ>> թվով, այդ թվում ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝

6) <<Այլ նպաստներ բյուջեից>> 4729 ծրագրի <<50.0 հազար դրամ>> թիվը փոխարինել << 200.0 հազար դրամ>> թվով

7) Բաժին 11, խումբ 1, դաս 2 <<Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ>> ծրագրի <<2133.7 հազար դրամ>> թիվը փոխարինել <<2609.0 հազար դրամ>> թվով, այդ թվում ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝

8) 4891 <<Պահուստային միջոցներ>> ծրագրի <<2133.7 հազար դրամ>> թիվը փոխարինել <<2609.0 հազար դրամ>> թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ավագանու անդամներ՝	կողմ (5)	դեմ( )	ձեռնպահ ( )
1. Փայլակ Ալեքսանյան			
2. Մեր Մնացյան			
3. Մեր Սարգսյան			
4. Մնացական Հեբեյան			
5. Սևակ Ավագյան			

Բասեն համայնքի ղեկավար Հ. Պետրոսյան

18 հունվար 2015 թվական

գյուղ Բասեն